«Վ3-ԳՀԱՊՁԲ-2021/4» ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N Վ3-ԳՀԱՊՁԲ-2021/4

ք. Վանաձոր «___» _____ 21 թ.

«Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ն, ի դեմս տնօրենի ժ/պ՝ Մ.Ղազարյանի, որը գործում է «Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ն կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Վիոլա» ՍՊԸ -ն, ի դեմս տնօրեն՝ Ա. Մեժլումյանի, որը գործում է «Վիոլա» ՍՊԸ-ն կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ախտորոշիչ և քիմիական նյութերը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝

պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Ջնջել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 261600(երկու հարյուր վաթսունմեկ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[1]: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը

---

[1] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է տույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[2]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով

---

[2] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 37 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:[3]

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա» ՊՓԲԸ	«Վիոլա» ՍՊԸ
ՀՀ, ք. Վանաձոր, Պ.Սևակի 49	ք. Երևան, Աճառյան փ. 2-րդ նրբ. թիվ 3
«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ	«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ 220055140267000	Հ/Հ 1570001092880100
ՀՎՀՀ 06907229	ՀՎՀՀ 00801026
Տնօրեն՝ Մ. Ղազարյան	Տնօրեն՝ Ա. Մեժլումյան
----------	----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

---

[3] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Հավելված N 1
« » 2021 թ. կնքված
«ՎՀ-ԳՀԱՊՁԲ-2021/4» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

նախատեսված չափաբաժնի համարը հրավերով	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափի միավորը	միավոր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման հասցեն	մատակարարման քանակը	մատակարարման ժամկետները
3	33141179/3	Ազատ թիրոքսինի որոշման համար նախատեսված թեստ	ДС-ИФА-Тироид-Т4свободный ООО НПО Диагностические системы Ռուսաստանի Դաշնություն	Ազատ թիրոքսինի որոշման համար նախատեսված թեստ FT4: Նախատեսված բաց համակարգի համար: Մեթոդը իմունոֆերմենտատիվ որոշման եղանակ: Մեկ ռեագենտի հավաքածույում թեստերի քանակը 96թեստ(հատ): Ազատ թիրոքսինի հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը: Մատակարարը պարտավոր է վերածրագրավորել իմունոֆերմենտատիվ վերլուծիչը ըստ պատվիրատուի ցանկության: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485	հատ	193,75	37200	192	Պ. Սևակի 49	192	Մատակարարումն իրականացվում է պատվիրատու ի պահանջից հետո 5աշխատանքային օրվա ընթացքում բայց ոչ շուտ պայմանագիր կնքելու 20-րդ օրից, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը
4	33141179/4	ԱԼԱՏ-ի որոշման համար նախատեսված թեստ	ALAT/ GPT (IFCC) PZ Cormay S.A. Լեհաստան	ԱԼԱՏ-ի որոշման համար նախատեսված թեստ ALAT՝ նախատեսված բաց համակարգի համար: Մեթոդ կինետիկ եղանակով: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/պլազմա/մեզ: Մեկ ռեագենտի հավաքածույում թեստերի քանակը120թեստ(հատ) : 1թեստի համար աշխատանքային ռեակտիվի ծավալը 1մլ է: ԱԼԱՏ-ի հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը: Մատակարարը պարտավոր է վերածրագրավորել բիոքիմիական վերլուծիչը ըստ պատվիրատուի ցանկության: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության	հատ	56	13440	240	Պ. Սևակի 49	240	

				ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485							
5	33141179/5	Թիրեոպերօքսիդազայի նկատմամբ հակամարմինների որոշման համար թեստ	ДС-ИФА-ТИРОИД-АНТИ-ТПО ООО НПО Диагностические системы Ռուսաստանի Դաշնություն	Թիրեոպերօքսիդազայի նկատմամբ հակամարմինների որոշման համար նախատեսված թեստ ՝ AntiTPO: Նախատեսված բաց համակարգի համար: Մեթոդը իմունոֆերմենտատիվ որոշման եղանակ: Մեկ ռեագենտի հավաքածույում թեստերի քանակը 96թեստ(հատ): AntiTPO հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը : Մատակարարը պարտավոր է վերածրագրավորել իմունոֆերմենտատիվ վերլուծիչը ըստ պատվիրատուի ցանկության: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485	հատ	193,75	37200	192	Պ. Սևակի 49	192	
7	33211110	Մեզի թեստ ստրիպ	VioLine 10 DFI Co. Ltd Հարավային Կորեա	Ախտորոշող թեստ -ձողիկներ՝ 10 պարամետրի որոշելու համար: Մեթոդը քրոմատոգրաֆիկ: Ֆորմատը 100 թեստ (հատ) Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485:	հատ	56,4	28200	500	Պ. Սևակի 49	500	
8	33211120	Գլյուկոզայի որոշման համար նախատեսված թեստ	GLUCOSE PZ Cormay S.A. Լեհաստան	Գլյուկոզայի որոշման համար նախատեսված թեստ GLUCOSE՝ նախատեսված բաց համակարգի համար: Մեթոդ Ֆերմենտատիվ կոլորոմետրիկ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/պլազմա/մեզ: Մեկ ռեագենտի հավաքածույում թեստերի քանակը 480թեստ(հատ) : Գլյուկոզայի	հատ	12,2	11712	960	Պ. Սևակի 49	960	

				հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը : Մատակարարը պարտավոր է վերածրագրավորել բիոքիմիական վերլուծիչը ըստ պատվիրատուի ցանկության: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485:							
9	33211130/1	Խոլեսթերինի որոշման համար նախատեսված թեստ	CHOLESTEROL PZ Cormay S.A, Լեհաստան	Խոլեսթերինի որոշման համար նախատեսված թեստ CHOL՝ նախատեսված բաց համակարգի համար: Մեթոդ Ֆերմենտատիվ կոլորոմետրիկ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/պլազմա/մեզ: Մեկ ռեագենտի հավաքածույում թեստերի քանակը 240թեստ(հատ): 1թեստի համար աշխատանքային ռեակտիվի ծավալը 1մլ է : Խոլեսթերինի հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը : Մատակարարը պարտավոր է վերածրագրավորել բիոքիմիական վերլուծիչը ըստ պատվիրատուի ցանկության: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485:	հատ	24,36	19488	800	Պ. Սևակի 49	800	
11	33211130/3	HDL Խոլեսթերինի որոշման համար նախատեսված թեստ	CORMAY HDL DIRECT 30 PZ Cormay S.A. Լեհաստան	HDL խոլեսթերինի որոշման համար նախատեսված թեստ HDL՝ նախատեսված բաց համակարգի համար: Մեթոդը Ֆերմենտատիվ կոլորոմետրիկ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/պլազմա/մեզ: Մեկ ռեագենտի հավաքածույում թեստերի քանակը 120թեստ(հատ): Խոլեսթերինի հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը : Մատակարարը պարտավոր է վերածրագրավորել բիոքիմիական	հատ	344	41280	120	Պ. Սևակի 49	120	

				վերլուծիչը ըստ պատվիրատուի ցանկության: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485:							
12	33211140	Բիլիռուբինի (ուղղակի և ընդհանուր) որոշման համար նախատեսված թեստ	BILIRUBIN T&D Bio Lab Diagnostics Ltd Հնդկաստան	Բիլիռուբինի (ուղղակի և ընդհանուր) որոշման համար նախատեսված թեստ BIL DIRECT +TOTAL՝ նախատեսված բաց համակարգի համար: Մեթոդը Ֆերմենտատիվ կոլորոմետրիկ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/պլազմա/մեզ: Մեկ ռեագենտի հավաքածույում թեստերի քանակը 200թեստ(հատ) : Բիլիռուբին (ուղղակի և ընդհանուր) հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը : Մատակարարը պարտավոր է վերածրագրավորել բիոքիմիական վերլուծիչը ըստ պատվիրատուի ցանկության: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485:	հատ	27,6	5520	200	Պ. Սևակի 49	200	
13	33211150	Միզանյութի որոշման համար նախատեսված թեստ	UREA-HP Bio Lab Diagnostics Ltd Հնդկաստան	Միզանյութի որոշման համար նախատեսված թեստ UREA՝ նախատեսված բաց համակարգի համար: Մեթոդը կոլորիմետրիկ եղանակով: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/պլազմա/մեզ: Մեկ ռեագենտի հավաքածույում թեստերի քանակը 200թեստ(հատ) : Միզանյութի հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը : Մատակարարը պարտավոր է	հատ	31,2	9360	300	Պ. Սևակի 49	300	

				վերածրագրավորել բիոքիմիական վերլուծիչը ըստ պատվիրատուի ցանկության: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485:							
19	33211230	ՄՌՊ որոշման համար նախատեսված թեստ	R.P.R Bio Lab Diagnostics Ltd Հնդկաստան	ՄՌՊ որոշման համար նախատեսված թեստ RPR՝ նախատեսված բաց համակարգի համար: Մեթոդը ագլյուտինացիոն եղանակով: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Մեկ հավաքածուում թեստերի քանակը 100թեստ(հատ): RPR որոշման համար նախատեսված հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը : Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485:	հատ	82,8	24840	300	Պ. Մնակի 49	300	
22	33211300	Կալցիումի որոշման համար նախատեսված թեստ	CALCIUM (CPC) PZ Cormay S.A. Լեհաստան	Կալցիումի որոշման համար նախատեսված թեստ՝ նախատեսված բաց համակարգի համար: Մեթոդը Ֆոտոմետրիկ կինետիկ եղանակով: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/պլազմա/մեզ: Մեկ ռեագենտի հավաքածուում թեստերի քանակը 240թեստ(հատ) : 1թեստի համար աշխատանքային ռեակտիվի ծավալը 1մլ է : Կալցիումի հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը : Մատակարարը պարտավոր է վերածրագրավորել բիոքիմիական վերլուծիչը ըստ պատվիրատուի ցանկությամբ: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485:	հատ	27,5	13200	480	Պ. Մնակի 49	480	

23	33211310	Թրոմբոպլաստինի որոշման համար նախատեսված թեստ	Prothrombin Time (PT) Liquid Kit/РЕНАМПЛА СТИН TAIZHOU STEELLEX BIOTECH CO LTD Չինաստան/ Renam ՌԴ	Թրոմբոպլաստինի որոշման համար նախատեսված թեստ՝ նախատեսված բաց համակարգի համար: Մեթոդը ֆիբրինոգոյացման ժամանակի որոշման եղանակով: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/պլազմա/մեզ: Մեկ ռեագենտի հավաքածույում թեստերի քանակը 100թեստ(հատ): Թրոմբոպլաստինի հավաքածուն պետք է ունենա իր աշխատանքի համար անհրաժեշտ օգտագործման ձեռնարկով նախատեսված նյութերը : Մատակարարը պարտավոր է վերածրագրավորել բիոքիմիական վերլուծիչը ըստ պատվիրատուի ցանկությամբ: Որակի սերտիֆիկատներ՝ ISO13485:	հատ	40,32	20160	500	Պ. Սևակի 49	500	

ԳՆՈՐԴ

«Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա» ՊՓԲԸ
ՀՀ, ք. Վանաձոր, Պ.Սևակի 49
«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
ՀՀ 220055140267000
ՀՎՀՀ 06907229
Տնօրեն՝ Մ. Ղազարյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Վիոլա» ՍՊԸ
ք. Երևան, Աճառյան փ. 2-րդ նրբ. թիվ 3
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570001092880100
ՀՎՀՀ 00801026
Տնօրեն՝ Ա. Մեժլումյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հ/Հ	Անվանումը ապանքային նշանը	Միավորի գինը	Մատակարարման ենթակա քանակները ըստ ամիսների																					
			մարտ		ապրիլ		մայիս		հունիս		հուլիս		օգոստոս		սեպտեմբեր		հոկտեմբեր		նոյեմբեր		դեկտեմբեր		Ընդամենը	
			քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար	քանակ	գումար
3	Ազատ թիրոքսինի որոշման համար նախատեսված թեստ	193,75	96	18600					96	18600													192	37200
4	ԱԼԱՏ-ի որոշման համար նախատեսված թեստ	56	120	6720					120	6720													240	13440
5	Թիրեոպերօքսիդազայի նկատմամբ հակամարմինների որոշման համար թեստ	193,75	96	18600					96	18600													192	37200
7	Մեզի թեստ ստրիպ	56,4	100	5640	100	5640	100	5640	100	5640	100	5640											500	28200
8	Գլյուկոզայի որոշման համար նախատեսված թեստ	12,2	240	2928	240	2928	240	2928	240	2928													960	11712
9	Խոլեսթերինի որոշման համար նախատեսված թեստ	24,36	200	4872	200	4872	200	4872	200	4872													800	19488
11	HDL Խոլեսթերինի որոշման համար նախատեսված թեստ	344	120	41280																			120	41280
12	Բիլիռուբինի (ուղղակի և ընդհանուր) որոշման համար նախատեսված	27,6	100	2760					100	2760													200	5520

	թեստ																							
13	Միզանյութի որոշման համար նախատեսված թեստ	31,2	100	3120			100	3120	100	3120													300	9360
19	ՄՌՊ որոշման համար նախատեսված թեստ	82,8	100	8280			100	8280	100	8280													300	24840
22	Կալցիումի որոշման համար նախատեսված թեստ	27,5	120	3300	120	3300	120	3300	120	3300													480	13200
23	Թրոմբոպլաստինի որոշման համար նախատեսված թեստ	40,32	200	8064			200	8064	100	4032													500	20160

Ախտահանիչ և քիմիական նյութերի նշված քանակները պահանջվող առավելագույն քանակներն են

- Ապրանքի մատակարարումը մինչև պահեստ և բեռնաթափումն իրականացնում է Մատակարարը
- Մատակարարումը պետք է իրականացվի ժամանակին, պատշաճ
- Ապրանքները պետք է լինեն չօգտագործված

ԳՆՈՐԴ

«Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա» ՊՓԲԸ
ՀՀ, ք. Վանաձոր, Պ.Սևակի 49
«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
ՀՀ 220055140267000
ՀՎՀՀ 06907229
Տնօրեն՝ Մ. Ղազարյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Վիոլա» ՍՊԸ
ք. Երևան, Աճառյան փ. 2-րդ նրբ. թիվ 3
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570001092880100
ՀՎՀՀ 00801026
Տնօրեն՝ Ա. Մեժլումյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
« » 21 թ. կնքված
«ՎՅ-ԳՀԱՊՁԲ-2021/4» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄՍ դասակարգման (CPV)	անվանում	վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ «Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա» ՊՓԲԸ բյուջետային միջոցների հաշվին՝ ըստ ամիսների այդ թվում										
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	Ընդամենը
3	33141179/3	Ազատ թիրոքսինի որոշման համար նախատեսված թեստ	18600	18600	18600	37200	37200	37200	37200	37200	37200	37200	37200
4	33141179/4	ԱԼԱՏ-ի որոշման համար նախատեսված թեստ	6720	6720	6720	13440	13440	13440	13440	13440	13440	13440	13440
5	33141179/5	Թիրեոպերոքսիդազայի նկատմամբ հակամարմինների որոշման համար թեստ	18600	18600	18600	37200	37200	37200	37200	37200	37200	37200	37200
7	33211110	Մեզի թեստ ստրիպ	5640	11280	16920	22560	28200	28200	28200	28200	28200	28200	28200
8	33211120	Գլյուկոզայի որոշման համար նախատեսված թեստ	2928	5856	8784	11712	11712	11712	11712	11712	11712	11712	11712
9	33211130/1	Խոլեսթերինի որոշման համար նախատեսված թեստ	4872	9744	14616	19488	19488	19488	19488	19488	19488	19488	19488
11	33211130/3	HDL Խոլեսթերինի որոշման համար նախատեսված թեստ	41280	41280	41280	41280	41280	41280	41280	41280	41280	41280	41280
12	33211140	Բիլիռուբինի (ուղղակի և ընդհանուր) որոշման համար նախատեսված թեստ	2760	2760	2760	5520	5520	5520	5520	5520	5520	5520	5520
13	33211150	Միզանյութի որոշման համար նախատեսված թեստ	3120	3120	6240	9360	9360	9360	9360	9360	9360	9360	9360
19	33211230	ՄՌՊ որոշման համար նախատեսված թեստ	8280	8280	16560	24840	24840	24840	24840	24840	24840	24840	24840
22	33211300	Կալցիումի որոշման համար նախատեսված թեստ	3300	6600	9900	13200	13200	13200	13200	13200	13200	13200	13200
23	33211310	Թրոմբոպլաստինի որոշման համար նախատեսված թեստ	8064	8064	16128	20160	20160	20160	20160	20160	20160	20160	20160

ԳՆՈՐԴ
«Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա» ՊՓԲԸ
ՀՀ, ք. Վանաձոր, Պ.Սևակի 49
«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
ՀՀ 220055140267000
ՀՎՀՀ 06907229
Տնօրեն՝ Մ. Ղազարյան

_____
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
«Վիոլա» ՍՊԸ
ք. Երևան, Աճառյան փ. 2-րդ նրբ. թիվ 3
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570001092880100
ՀՎՀՀ 00801026
Տնօրեն՝ Ա. Մեժլումյան

_____
(ստորագրություն)
Կ.Տ.